

րայի լիսէի դասերուն և վկայական ստացած 1897ին: Յետոյ անցնելով Եւրոպա, Մանչեսթրի վիքթորիա համալսարանին մէջ 1898—1899 ին տնտեսագիտական և վաճառականական գիտութեանց հետեւած է: 1910 ին նախ Բարիլի և ապա Ամերիկայի բազմարուեստեան Alabama էնսթիթիւի երկրագործական ուսմանց ընթացքը բոլորած է:

Իբր հողագէտ (Agronome) իր առաջին աշխատութիւնները կատարած է Զմիւռնիոյ մէջ (1906—1907), յետոյ անգղիական կառավարութեան կողմէն 1907—8ին պաշտօն ընդունած է Սուտան երթալ նոր ստացուած հասարակածային գաւտի մը մէջ ֆառչի մշակութիւնը տարածելու համար: Իր պայմանագրութեան լրանալէն յետոյ՝ օսմանեան կայսրութեան կողմէ կարգուեցաւ երկրագործական պատուիրակ Միացեալ Նահանգաց մէջ (1909—1911) և յետոյ Պրագլիւիոյ մէջ՝ (1912—1913):

1914ին դարձեալ ղրկուեցաւ Tulza (Oklalama, Միացեալ Նահանգ Ամերիկայի) իբր ներկայացուցիչ Թուրքիոյ Dry Farming դոնկրէին մէջ:

Ընդհ. Պատերազմին սկիզբը, ինչպէս ուրիշ հայ պաշտօնեաներ, Նուրեան եւս արձակուեցաւ իր պաշտօնէն, բայց 1916 ին դահաժառանգ Ապտիւլ Մէճիտ իշխանը կարգեց Նուրեանը իբր երկրագործական խորհրդական: 1920ին անդամ քաղ. ժողովին և վարիչ տեղեկատու գիււանին Պոլսի: 1923 ին անուանուեցաւ գիււանապետ Ս. Յակոբի վանքի պատրիարքարանին և կը վարէ ցարգ նոյն պաշտօնը մեծ ձեռնհասութեամբ:

1 Յունիս 1926 ին ձիպրան Կարկուռի ժառանգորդները Երուսաղէմի մէջ հայոց Ս. Յակոբեանց վանքին պատկանող մեծ արժի դատին վերաքննութեան համար, Բրիտանական պետութեան բարձրագոյն ատեանի դատական մասնաւոր ճիւղին գիմուժ կատարած էին, պատրիարքարանի կողմէն գիււանապետ Նուրեանի պաշտօն յանձնուեցաւ Լոնտոն երթալ և ներկայացուցիչն ըլլալ պատրիարքարանի և անոր շահերուն պաշտպանութիւնը հետապնդել. Նուրեան յաջողութեամբ գլուխ հանեց իրեն յանձնուած պաշտօնը: Եւ 1928 Նոյ. 25ին վերադարձաւ Երուսաղէմ և արժանացաւ Ս. Պատրիարքին, և ընդհ. միաբանութեան ջերմագին շնորհակալութեանց: Նուրեանի յանձնուած պաշտօնին՝ ինչպէս նաև սոյն դատին մանրամասն պա-